

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(Պարագրաֆացի գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“)

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Լացի կիրակի և տոն օրերին):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները.— Եւրոպայի տե-
սու թիւնը համակ ղուբայից, ներքին լուրերը,
յիւրաքանչիւր տեսութիւնը: Ֆրանսիայ, Բուս-
կիա.— Մշակիչ հեռագիրները.— Յայտարարութիւն-
ները.— Բանաստիճական, Թատրոնական մասնա-
ժողովի հաշիւը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԵ- ՆԵՐԸ

«Մշակիչ» ներկայ համարում
ընթերցողը կը կարգայ Միջազ-
գային ընկերութեան Լոնդոնից
մեզ հաղորդված հեռագիրը, որ
անգլիական պարլամենտի ընտրու-
թիւնների մէջ յաղթող է հանդի-
սանում ազատամիտ կուսակցու-
թիւնը: Ուրեմն յոյս կայ որ պահ-
պանողական կուսակցութիւնը շու-
տով ընկնելու է և այժմեան կա-
ռավարութիւնը Մշակայում կը
փոխվի:

Մեր կարծիքով ամեն կողմից
առիթ կայ ուրախանալու որ Մշ-
ակայում կատարվելու է այդ տե-
սակ յանկարծակի փոփոխութիւն:

Մենք չենք խօսի այն բանի
վրա թէ ինչ փոփոխութիւններ
կարող է առաջ բերել Մշակայի
ազատամիտ կուսակցութեան յաղ-

թութիւնը եւրոպական պետու-
թիւնների միմեանց հետ ունեցած
քաղաքական յարաբերութիւնների
մէջ. երեւի ազատամիտ կուսակ-
ցութիւնը աւելի բարեկամաբար
կը վերաբերվի դէպի Ռուսաս-
տանը: Լրագիրներից շատերը
կարծում են որ անգլիական ազա-
տամիտ կուսակցութեան յաղթող
հանդիսանալը շատ յաճելի չի լինի
Գերմանիային: Չենք խօսի այն
բանի մասին թէ նոյն իսկ Մշակայի
մի քանի ներքին հարցերի վճռու-
թիւն վրա Բիսմարկի անկումն
մեծ ազդեցութիւն կունենայ: Օ-
րինակ Երանդիայի խնդիրը, երե-
ւի, մի որոշ և իրանդացիների
համար ցանկալի լուծումն կը սը-
տանայ:

Բայց մեզ ամենից շատ պէտք
է հետաքրքրի այն դիրքը, որ կը
բռնի Մշակեան արեւելեան խնդրի
վերաբերութեամբ և մանաւանդ
ինչպէս կը նայի նա թիւրքաց
հայերի վրա:

Հայտնի է որ ազատամիտ
կուսակցութիւնն էր, որ անդա-
դար անում էր համակրական ցոյ-
ցեր արեւելեան քրիստոնեաների
վերաբերութեամբ. թիւրքահապա-
տակ պալեաններին, բոլղարներին

և հայերին համակրող միտինդներ
կազմողը Մշակայում ազատամիտ
կուսակցութիւնն էր: Գլխաւորապէս
համակրութիւնը դէպի արեւելեան
քրիստոնեաները յայտնի է:

Ուրիշ կողմից յայտնի է որ
անգլիական ազատամիտ կուսակ-
ցութիւնը, երբ նա պետութեան
դէպի իր ձեռքն է առնում, եր-
բէք չէ հետևում այն ներգործա-
կան, արտաքին ամեն հարցերի
մէջ խառնվող քաղաքականութեա-
նը, ինչպէս պահպանողական կու-
սակցութիւնը:

Եթէ ազատական կառավա-
րութիւնը Մշակայում ոչինչ չա-
նի էլ թիւրքաց հայերի վիճակը
թեթեւացնելու համար, այնու ա-
մենայնիւ նա այն փնտր չի տայ
թիւրքահապատակ հայերին, ինչ
փնտր տուած է թիւրքիայի հա-
յերին Բիսմարկի կառավարու-
թիւնը: Բերլինի կոնգրէսից յե-
տոյ Մշակեան մէնակ յանձն ա-
ռաւ հոգալ թիւրքիայի մէջ ի-
րագործելի բարեփոխումների վրա:
Բայց ինչ արաւ Մշակեան երկու
տարվայ ընթացքում... Ոչինչ
կամ մինչև անգամ ահագին փնտ-
սեր տուեց խեղճ հայերին: Հար-

կերի ծանրութեան աճելը, ֆի-
նանսական ընդհանուր ճգնաժամը,
քուրդերի կատաղութիւնը, վեր-
ջապէս սովը.— ահա անգլիական
հովանաւորութեան հետևանքը:

Եւ չո պէտք է մոռանալ, որ
այս տեսակ դրութեան մէջ թիւր-
քիայի հայերը գրեթէ հնար չու-
նեն բողբոջ ամբողջ Լեւոստային,
որովհետեւ եւրոպական պետու-
թիւնները իրապէս Մշակայի
խնամքին են յանձնել թիւրքիայի
վրա հսկելը, ուրեմն իրանք իրանց
վրայից վերցնելով պատասխանա-
ւորութիւնը, Մշակայի վրա են
դրել թիւրքիային բարոյքելու պա-
տասխանատուութիւնը:

Եւ ինչ էթէ Մշակեան այլ ևս
անմիջապէս չի խառնվի թիւր-
քիայի գործերի մէջ, մէնակ չի
հովանաւորվի այդ երկիրը.— հայե-
րը միշտ միջոց կունենան բողո-
քել ամբողջ Լեւոստային և կախ-
ված չեն լինի միմյանց Մշակա-
յից:

Բացի սորանից, Բ. Դուռը
այն պատճառով իրան ուժեղ է
զգում, որ ունի Մշակայի պէս
մի զօրեղ պաշտպան: Իսկ եթէ
թիւրքաց կառավարութիւնը կը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍՆԱԳՈՂՈՎԻ ՀԱՇՅՈՐԸ

Մարտի 6-ին, արհեստագործների կուրի զանգուած
տեղի ունեցաւ հայոց թատրոնի հիմնադրների ընդ-
հանուր ժողովը. ներկայ էին 22 անձինք միայն.
անդակաւ մասուի ներկայացուցիչները հրաւիրված
չէին, և ոչ նախագէտ հրաաարակված էր ժողովի
որ օր լինելը:

Այդ ժողովի մէջ թատրոնական մասնաժողովի
անդամները ներկայացրին իրանց տարեկան գոր-
ծունէութեան հաշիւը: Հաշիւից երևում է, որ
մասնաժողովը 30 ներկայացումից մուտք է ունե-
ցել 14,974 ռուբլի, բայց ծախսել է 16,981 ռուբ-
լի: Ուրեմն մուտքից աւելի է ծախսել, այսինքն վը-
նաս է կրել 2007 ռուբլի:

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, թէ
արդիւն ոգեւորութեամբ մեր հասարակութիւնը
լեցնում էր թատրոնի դահլիճը, աչքի առաջ ունե-
նալով ներկայացումների լիակի մուտքերը.— մենք
սպասում էինք, որ մասնաժողովը իր առաջին տե-
ղանի մէջ ոչ միայն զեֆիգիտ չի ունենայ, այլ մի
նշանաւոր գումար է կաւելացնել թատրոնի գո-
յութիւնը պահպանելու համար սկզբում հաւաքված
հիմնական գումարաւոր վրա: Բայց այդ անկաւա-
թիւնները խաբեցին մեզ: Մասնաժողովը, որպէս
երևում է, իր գործը այն աստիճան անհաջիւ և
անկարգ կերպով է տարել, որ փոխանակ շահվե-
լու, վնասվել է:

Յիշեալ ենթադրութիւնը աւելի չօշափելի կազու-
ցանելու համար, մենք հարկաւոր ենք համարում
մի առ մի մէջ բերել մասնաժողովի արած ծախսե-
րը, որոնց մէջ նկատվում են հրէշաւոր չափու-
թիւններ և անխնայ վատնումներ:

1. Պոլսից երկու դերասանուհի և մի դերա-
սան հրաւիրելու առիթով նրանց և պ. Չախիւանի
ճանապարհածախքը եղել է 1225 ռ. 2. Պ. Չախ-
իւանը Պոլսի գնալու համար առանձին վարձա-
արութիւն է ստացել 394 ռ. 76 կ. 3. Մինչև
ներկայացումների սկսվելը պոլսեցի դերասանուհի-
ները և դերասանը Թիֆլիսում ծախսել են 800
րուբլի: 4. Օր. օր. Աստղիկի, Սիրանուշի և տ. Չը-
մէկեանի համար չորեք են կարել տուած նրանց
բենեֆիսի առիթով 450 ռ. 5. Պոլսում գնած բե-
պերտուարի համար վճարած է 200 ռ. 6. Թիֆ-
լիսում գնած թատրոնական գրուածքների համար
28 ռ. 45 կ. 7. Պիեսաներ և դերեր արտադրելու
համար վճարած է 502 ռ. 70 կ. 8. Չանաղան
անանուն ծախքեր են եղած 1035 ռ. 35 կ. 9.
Դերասանական խմբին Բոնիկ 6345 ռ. 10. Պ.
Պարսին թատրոնի վարձ 6000 ռ. Ընդամենը
16, 981 ռ. 26 կ.:

Յիշեալ գումարից, ի բաց առնելով 6345 ռ., որ
վճարված է դերասաններին որպէս Բոնիկ, մնա-
ցած 10,636 ռ. մենք համարում ենք բոլորովին ա-
ւելորդ: և չափաւորութիւնից առաջ եկած, անհրեժի
ծախքերը: Ահա ինչ մտքով:

Պոլսից երկու դերասանուհի և մի դերասան հրա-
ւիրելու, Թիֆլիս բերելու, և մինչև ներկայացում-
ների սկսվելը պահելու համար ծախսվել է 2420
ր.: Դա չափաւորութիւն չէ: Մինչդեռ նրանց կարելի
էր բերել տալ կամ 3 ռուբլիանոց մի հեռագրով
և կամ 7 կոպեկանոց մի նամակով: Բերված դե-
րասանուհիները կամ դերասանը այնքան հազուա-

զիւտ տարածներ չէին, որ հարկաւոր լինէր նրանց
հրաւիրելու համար առանձին հրաւիրակ ու-
ղարկել և հազարներ ծախսել: Պոլսի մէջ նը-
րանց նմանները այնքան շատ են, որ ամ-
սական 100—150 ռուբլի Բոնիկների անունը
լսածին պէս, իրանք վաղ կը տային և կը գային:
Նոյն իսկ այժմեան թատրոնի հանճարը, թագն ու
պարծիքը, պ. Աղամեանը, մի քանի տարի առաջ
վարձված էր Նոր-Նախիվեանում, որպէս լսել ենք,
ամսական 25 ռուբլով: և նրա ամբողջ պոլսեցի
խումբը, որ աւելի ընտիր անձինքներից էին կազմ-
ված քան այժմեանները, նոյն Բոնիկ էին ստանում,
և նոր նախիվեանցիք նրանց հրաւիրելու համար ոչ
դրի չէին աւարկել, նրանք իրանց գոտի էին եկել
Պոլսից:

Օր. օր. Աստղիկի, Սիրանուշի և տ. Չըմէկեանի
համար չորեք է կարվել նրանց բենեֆիսի առիթով
450 ռուբլու: Դա չափաւորութիւն չէ: Դերա-
սանուհիները, որոնք բենեֆիսներից հազարներ
էին ստանում, իրանք կարող էին հող տանել
իրանց չորեքի մասին, մասնաժողովը պարտա-
ւոր չէր նրանց գուքելու և դարդարելու հա-
մար աւելորդ ծախքեր անել:

Չանաղան անանուն ծախքեր է եղած 1035 ռ.:
Այդ անանուն ծախքերի մէջ են մտնում, երեւի
այն ընծաները, որոնց մասնաժողովը առատօրէն
թափում էր մի քանի ընտր եւ ալ դերասանու-
հիսների և դերասանների վրա, որոնց մէջ առաջին
տեղը բռնում էին պոլսեցիները: Մենք ընդդէմ
չէինք լինի, եթէ մասնաժողովը իր ձեռքի տակ
ունեցած տաղան դնելը աւելի խրախուսելու
համար նրանց կը յարգէր որ և իցէ պարգեով:
Բայց այդպիսի առատաձեւութիւն անում են
այն մասնակ միայն, երբ մէջանում վատտակ
կայ և ոչ թէ զեֆիգիտ:

Ամենամանչան ծախքը, որ պէտք է ամենապը-
խաւոր տեղը բռնէր բոլոր ծախքերի մէջ, գործ է
զրկել թատրոնի ր և պ ե տ ու ա ր ի վրա: Դե-
րասանուհիների լաթերի, գեղեցիկ ընծաների, Պոլ-
սի ճանապարհորդութեան և զանազան անանուն
չափաւորութիւնների վրա 3905 ռուբլի ծախսող մա-
նաժողովը, Թիֆլիսում թատրոնական գրուածք-
ներ է գնել 28 ռ. 45 կոպեկի (չը գիտեմք այդ
գնով ինչ գրուածքներ կարելի էր գնել), իսկ Պոլ-
սում 200 ռուբլու: Այդ կէտի մէջ մենք համա-
րում ենք թատրոնական մասնաժողովին ոչ միայն
իր յանձն առած պարտաւորութիւնների մէջ ան-
ընդունակ, այլ մինչև անգամ անբարեխղճ: Նա
լաթերի, գաղաղարանների, ընծաների և այս ու
այն պարունի քեֆերի համար հազարներ է ծախ-
սում, իսկ ր և պ ե տ ու ա ր ի հարստացնելու
վերաբերութեամբ, որի մէջն է կայանում գործի
ամբողջ հողին և նրա նշանակութիւնը.— մնում է
անհող:

Մենք բոլորովին օգտաւէտ և նպատակայարմար
կը համարէինք, եթէ մասնաժողովը փոխանակ
վերոյիշեալ անկարգ ծախքերի, մի քանի հազար
րուբլի գործ կը դնէր թատրոնի ողորմելի րեպեր-
տուարը հարստացնելու համար, և իր ընտրողու-
թեամբ պիտաներ թարգմանել կամ փոխադրել կը
տար, և կամ լաւ պրեմիաներ նշանակելով, կը
յորդորէր ձեռնհաս գործիներին նոր պիեսաներ
ստեղծելու:— Ահա այդ համարում ենք մենք մի
հարստութիւն, որի վրա ծախսված փողը միայն
եւրոպական վնաս կարելի է համարել, և ոչ
Աստղիկի կամ Սիրանուշի լաթերի և ընծաների
ծախքերը, որպէս աշխատում է մեզ հաւատացնել
իշխ. Ամատունին:

Խօսելով Պոլսից բերած 200 ռուբլիանոց րեպեր-
տուարի գեղարուեստական և կրթողական նշա-

Կորցնի Լեզիայի պաշտպանութիւնը և հովանաւորութիւնը, — նա իրան թող կը զգայ և այդքան յանդուգն չի վարվի իր հպատակ բրիտանականներին հետ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴՈՒՐԱՅԻՑ

Փետրվարի 28

Տեղիս հոգևոր-ազգային դպրոցը ունի փոքրիկ մայր դուռնար, մօտաւորապէս 2800 բուրձի Այս դուռնարը պահպանում էր հոգաբարձական զանազանի մօտ՝ որը բարեխղճաբար և ազգասիրութեամբ է վարվում—այսինքն նշանակում է տոկոս իր կառնի համեմատութեամբ Բացի սրանից դպրոցը ստանում է մասնաւոր նուէրներ և ունի մի քանի հատկութիւններ վ և հ ա մ փ ա լ ի յ յատկացրած, այնու ամենայնիւ դպրոցը մի քանի ժամանակ դադարեց գոյութիւնից, ինչպէս ասում են, մի կողմից տոկոսի սղութիւնը, միւս կողմից նուէրների և հատկութիւնների հաստատութիւնը պղծվեց եղան դպրոցի գոյութեան, բայց մի քանի ամսից յետոյ ժողովրդեան յոգեմունքից ստիպված ուղի կանգնեց դպրոցը և մինչև այժմ էլ շարունակվում է (այս մասին մի ուրիշ անգամ)։ Այսպիսի մի ժամանակ, երբ դպրոցը մեծ կարողութիւն ունէր դրամական օժանդակութեան, մէկը հոգաբարձական իրականացրեց փետրվարի 5-ին հոգաբարձական ժողովին մի յայտարարութիւն, որի մէջ համառօտ կերպով յիշելով հոգաբարձութեանը դպրոցի այժմեան նիւթական անախանձելի դրութիւնը, խնդրում էր ի միասին աշխատել դպրոցի յառաջագիւծութեան և բարեւարկութեան համար, և մէջ էր բերում զանազան զանազան զեղծումները։ Յայտարարութիւնն ներկայացնող պ. հոգաբարձուն վերջում յօժարութիւն յայտնեց, որ եթէ մինչև փետրվարի 15-ն առձեռն պատրաստ կը լինի դպրոցական մայր դուռնարը, ինքն պատրաստ է գրաւական ներկայացնելով իր տուն վեր առնել դուռնարը և չահեցնել 12 տոկոս, իսկ հակառակ դէպքում պահանջել պ. զանազանից գրաւական և հաշիւ տոկոս նոյնքան որքան ինքն յանձն է առնում։

Այսպիսի մի յայտարարութիւն, ի հարկէ, քիչ մտածութեան առարկայ չի դառնայ պ. զանազանի, որովհետև այլ ևս նրա ազգասիրութիւնը? Ինչպէս ասացինք հոգաբարձական ժողովը կայացել էր

փետրվարի 5-ին, հոգաբարձուների օրինաւոր թիւը ներկայ էին, խօսակցութեան առարկայ էր պ. զանազանի և նրա հաշիւները, ամենը համակրում էին պ. հոգաբարձուի (յայտարարութիւնն ներկայացնող) յայտնած մտքերին։

Թող ընթերցողը ինքն երեսակայի այն գրութիւնը, որի մէջ գտնվում էր նոյն բոլորի պ. զանազանի, Արդարեւ բաւականին զօրաւոր դործ, տասը տարի ունենալ իշխողութիւն մի գումարի վրա և համարեն թէ սեփականացնել յաջողացրած, այժմ յետ են պահանջում։ Երբ բոլոր ներկայ եղող հոգաբարձուներն զննեցին պ. զանազանին—հարցնելով թէ ինչ ունի առեւտր, նա զողովուն ձեռքով գրականից հանելով կանուխ պատրաստած 700 բուրձին, որը կամ մեկնում էր հոգաբարձուներին և կամ էլ յետ դնում գրպանը ասելով, «ես ձեզ երբէք փող չեմ տալ, աւելի չուտ բոլորովին կը կորցնեմ քան թէ սահմանած տոկոսից աւելի վճարել և գրաւական ներկայացնել կը յօժարուեմ և ես ձեզ չեմ ճանաչում, ինձ ընտրել է ժողովուրդը և հաստատել ձայնովով, ուրեմն դուք իրաւունք չունէք ինձանից ոչ հաշիւ և ոչ փող ուղղելու»։

Այս անելով ստորիկ յուզված դուռն եկաւ զանիճից։

Ան մի զեղեցիկ օրինակ մեր միւս քաղաքների հոգաբարձուների (թէ չառեւ հոգաբարձուների) պ. զանազանի, լաւ լսելի և ակամջում պահելը, երբ հոգաբարձուների նոր ընտրութեան ժամանակը կը գայ, դու աշխատիր գիշեր և ցերեկ չը քրնել, միայն թէ միտա միշտ նոյն պաշտօնի մէջ, եթէ ոչ տունդ կը քանդուի, իսկ հակառակ դէպքում թէ չը յաջողեց անփութութեամբ պաշտօնիդ մէջ, այն ժամանակ երբ հաշիւ կուզեն կամ փող, առանց ամօթ քաշելու և կարմրելու պատասխանիր, «Եւրեք իրաւունք չունիք, ես ձեզ չեմ ճանաչում և հաշիւ էլ չեմ տալ, որովհետև ինձ ընտրել է ժողովուրդը և հաստատել ձայնովով»։

Դ. Բ. Ե.

ՆԵՐՔԻՆ ԴՈՒՐԱՅԻՐ

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր դպրոցում հոգաբարձական խորհրդարանի մէջ ապրիլ ամսի 9-ին 1880 ամի, երեկոյեան 8 ժամին, կը լինի աճուրդ (առանց կրկնաճուրդի) կապալով տալու նոյն դպրոցի կառուածը (ընծայած հանդուցեալ Աւետիք փրոյնանցից) որ գտնվում է Սյուրատ-սկի անուանուած փողոցում։ Պայմանաթուղթը կարելի է կարգաւ հոգաբարձութեան զիւանստան մէջ ամսի 9, բայց կիրակիէն և տօնից, առաւօտեան 10—12 ժամին։

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր դպրոցում,

թիւները, որոնք Պոլսում չեն եղել, որոնք յիշեալ պիեսաների մէջ չեն խաղացել, չեն վարձվել, և պիեսաների լեզուն անգամ անձանթ է նրանց։ Մասնաժողովը զեբաւանների միմեմասնութեան ընդունակութիւնները դիտում է փոքրամասնութեան, պօրտեպիւնների զիւրութիւններին, այլ ևս չենք խօսում այն բարեկոնեան լեզուա-խառնութեան մասին, որ մի ամբողջ սեղօնի ընթացքում զգուցեցրեց մեր հասարակութեանը։

Անցնելը կրկին ծախքերի քննութեանը։ 228 բուրձով դնած ողորմելի բեպերտուարի արտադրութեան համար ծախված է 502 ր. 70 Կ. (պօք մարմնից երկար է...)։ Մենք հաստատ աղբիւրներից լսել ենք, որ միայն 200 ր. է ծախվել արտադրութեան համար և ոչ աւելի։

Գերաւաններին և զերաւաններին ուժիկ է վճարված 6345 ր.։ Մեր կարծիքով, և որպէս օրինակ յայտնեցին, աւելի լաւ կը լինէր, որ զերաւաններին փոխանակ ուժիկ տալու, մասնաժողովը իւրաքանչիւր արժանաւորութեանը համեմատ մի մաս նշանակել իր ստացած մուտքից։ Բայց եթէ ուժիկ էր տալիս, քոնէ անաչառ լինէր, ոչ թէ չափազանցութեանը մէջ ընկնելով, պօրտեպիւններին առատօքն վճարէր, իսկ տեղացիներին սակաւ։

Պ. Պալմը ստացել է թատրոնի վարձ 30 ներկայացման համար 6000 *)։ Գա ծախքերի ամենահատաւորը կէտն է, որի մասին մենք մի փոքր երկար պիտի խօսենք։ Այդ 6000 բուրձին այնպիսի մի զգալի կորուստ է, որի պատճառով պէտք է համարել ոչ այլ ինչ, բայց միայն մասնաժողովի կրքերից, ինտրիգանե-

հոգաբարձական խորհրդարանի մէջ, ապրիլ ամսի 19-ին 1880 ամի, երեկոյեան 8 ժամին կը լինի աճուրդ (առանց կրկնաճուրդի) կապալով տալու թէ-լէթի սուրբ Գէորգայ ուխտատեղւոյ գումարում գտնված մի կրպակ իր մի սենեակով։ Պայմանաթուղթը կարելի է կարգաւ հոգաբարձութեան զիւանստան մէջ ամսին 9, բայց կիրակիէն և տօնից, առաւօտեան 10—12 ժամին։

Ա. Ա. Ա. Յ. Ա. Յ. մեր մշտական թղթակից պ. Գ. Նիկողոսեան գրում է մեզ։ «Այնքալ կիրակի, մարտի 16-ին, սրբազան Սաղիսեանցի բարոյից յետոյ, վանի սովորեց համար, նուիրատուներից շատերը, ինչպէս ասում են, սկսվում են թղթագրում և ոսկիներ գցել էին այն թաւախի մէջ, որ մանածեկն է եղել քահանաներից մէկը եկեղեցու պաշտօնեաների օգտին, ինչպէս որ ասում են իւրաքանչիւր կիրակի։ Լսելով յետոյ, թէ և շատ ուշ, քահանայի արած խաղախութեան մասին, լրբովված նուիրատու մարդկանցից և կանանցից շատերը եկել էին, ասում են, սրբազան Սաղիսեանցի մօտ, որպէս զի յետ պահանջին իրանց նուիրած դրամները, Այս ատիկով քանի օր է արդէն քննութիւն է կատարվում անխիղճ քահանայի վրա, զանէ ժողովրդի մէջ տարածված յուզմունքը հանդարտացնելու համար։ Ամենքը զայրոյթով հարցնում են՝ եթէ մեր աշխի առջև այսպիսի բաներ են կատարվում, ուրեմն ինչ կը լինի զեղեքում, որտեղ, ժողովուրդը անպալման կերպով հաւատում է ժողովարար քահանային և տալիս է նրան ինչ ունէ իր սովակ եղբայրների համար։ Մայրերից մի քանիսը յետ առնելով իրանց ոսկիները, անորին են ուղարկել խաղաղութիւններից մի-նին, Թիւրքիայի հայ սովակը հասցնելու համար»։

Ստացանք Թիֆլիսաբնակ պ. Արշակ Ս. Թէրլա-նեանից 1 բուրձ յօգուտ վանի սովատաններին։

Ստացանք սղանկեցի Գրիգոր Արտեմի Տեր-Աւակովից 4 բուրձ յօգուտ վանի սովատաններին։

Գրեթէ ամեն օր ներկայանում են «Մշակի» խմբագրատուն զանազան չքաւոր հայ գաղթականներ, զխաւորապէս վանի կողմերից, երեկ լսած լինելով որ մենք ժողովում ենք փողեր յօգուտ սովակից։ Մեզ անհնարին է այստեղ փողեր բաժանել և բոլորը, ինչ որ հայոց հասարակութիւնը մեր ձեռքով նուիրում է յօգուտ Թիւրքիայի հայ սովակից, պարտաւոր ենք, մինչև վերջին կօպէկը, հասցնել Կ. Պօլսի կենտրոնական յանձնաժողովին։ Մեզ ոչ ոք, ի հարկէ, իրաւունք չէ տուել, Թիֆլիսում գտնված վանի գաղթականներից փողերը բաժանելու, իսկ այդ պաշտօնը, մեր կարծիքով, կարող էր յանձն առնել հայ գաղթականների համար հիմնված մասնաժողովը, որ դեռ չարժանաւորում է իր գոյութիւնը և որի հետ միացան Թիֆ-

լիսի այն Թիֆլիսները, որոնք այժմ փող են ժողովում յօգուտ վանի սովատաններին։

Տեղական ուսուցիչները լսել են, որ Թիֆլիսի Գուման վճռել է լայնացնել երկու սառնիկ այն փողոցը, որ անցնում է Սիօնի մայր-եկեղեցու առջև, որտեղ նորերումս այրվեցաւ Անտոյի բարկանաւարան։

Երեւանի «Պատկ» լրագիրը հաղորդում է փետրվարի 28-ին ուսուցիչներին խուճուրդի սուրբ Գալիանեան օր. զպրոցի դալիճում մի ներկայացուցին Երեւանի Պրոգրէսիւտիւտ չքաւոր աշակերտների համար։ Լրագիրը ասում էր ներկայացուցին շատ անող անցաւ։

Ս. Պետերբուրգում հրատարակվող «Рассвету» շաբաթագիրը, որ ուսուցիչ հրէաների օրգան է, տպել է նորերումս մի համակրական առաջնորդ յօգուտ հայերի և «Մշակի» վերաբերութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԲԱՆՍԻԱ

Ֆրանսիական կառավարութիւնը աշխատում է դուրս գալ այն դժուար դրութիւնից, որի մէջ նա գտնվում է միևնույն Զերբիլի օրէնքի 7-ր յօդուածի սենատից չընդունվելու պատճառով։ Ինչպէս երևում է Փարիզից բաւանցված լուրերից Ֆրէյսինէի միւնիստրութիւնը մեծօրէն յօգուտը նորից չի խմբագրել և չի խառնվել այդ օրէնքի առիթով պատգամաւորների ժողովում լինելու երկրորդ քննութեան մէջ։ Հանրապետութեան սահմանադրութիւնը պահանջում է այդ քննութիւնը։ Երբ Ֆրանսիական սենատը փոփոխութիւններով հաստատում է պատգամաւորների ժողովից ընդունված օր և է օրէնքը նախագիծ, այդ դէպքում նախագիծը յանձնվում է պատգամաւորների ժողովին երկրորդ քննութեան համար։ Պատգամաւորների ժողովը կամ հաստատում է փոփոխված նախագիծը, կամ նրան մերժում է։ Այս վերջին դէպքում հարցը յետաձգվում է վեց ամսով և այդ ժամանակամիջոցի ընթացքում հարցը նորից չէ կարելի բարձրացնել։

Այժմեան միւնիստրութիւնը յանկանում է, որ պատգամաւորների ժողովը հաստատ-

ված մասովը մարտ 6-ի ընդ. ժողովի մէջ ի այդ վարմունքը արգարացնում է նրանով, որ Արժուտութեան թատրոնը փոքր էր, կարաւոր և դէկրացիաներ չունէր (*), և փոքրութեան պատճառով կարող էր տալ ամենաբարձր մուտք սովորական գնեթով 416 ր.։ միայն (սովորական գնեթով) Արժուտութեան թատրոնը տալիս է 437 ր., իսկ ինքնեֆիսի գնեթով 556 ր.։)—մինչդեռ ամառային թատրոնը աւելի մեծ լինելով, կարողացաւ մասնաժողովը 30 ներկայացման համար մուտք ստանալ 14,474 ր.։

Յիշեալ պատճառաբանութիւններով կամ մասնաժողովը ինքը սխալվել է իր հաշիւների մէջ, կամ իրան արդարացնելու համար, աշխատում իմարացնել հասարակութիւնը և նրան մոլորութեան մէջ ձգել։

Մի հասարակ մաթեմատիկական հաշիւ կը պարզէ բոլորը, Համեմատենք Արժուտութեան թատրոնը ամառային թատրոնի մուտքերի հետ։ Մասնաժողովը ամառային թատրոնում ներկայացումից ստացել է մուտք 14,474 ր., զգումաբից վճարել է Պալմին թատրոնի վարձ 6000 ր., ուրեմն մնում է զուտ արդիւնք միայն 8474 ր.։ Այժմ բաժանեք այդ 8474 բուրձին 30 ներկայացման վրա, որպէս զի տեսնենք, իւրաքանչիւր ներկայացումը միջին թիւով որքան արդիւնք է տուել։ 8474 թիւը բաժանելով 30-ի վրա, կը ստանանք 282 ր. 56 1/2 Կ.։ Կը նշանակէ, մասնաժողովը վր ամառային թատրոնում ստացել է ամենափոքր ներկայացումից աւելի պակաս արդիւնք, քան թէ կարող էր տալ Արժուտութեան թատրոնը, որովհետև այդ վերջինը տալիս է 437 ր., իսկ ամառային թատրոնը արդէն պատրաստ է ինչ

*) Մինչև հայոց ներկայացումները սկսվելը Արժուտութեան թատրոնի թէ կարաւոր և թէ դէկորատիւնները արդէն պատրաստ էին։

*) Պալմին բենեֆիսի առիթով նրան ընծայած մօտ 300 բուրձով պարկեցում արժէքը հաշիւների մէջ չէ երևում, երեկ, մի ուրիշ տեղ յանկանում են աշխի չը գարկելու համար։

Ֆերրիի օրէնքը այնպէս, ինչպէս նրան ըն-
դունել է սենատը, այսինքն առանց 7-դ յո-
դուածի և իրաւունք տալ միւսիստրութեանը
Հոգեւորականներին Հետ վարվել Ֆրանսիական
օրէնքների համեմատ:

Հոգեւոր միաբանութիւններին վերաբերալ
Ֆրանսիական օրէնքները շատ որոշ են: Այդ
միաբանութիւնները Ֆրանսիայում կարող են
գոյութիւն ունենալ միայն այն դէպքում,
երբ կառավարութիւնը նրանց ծանաչում է,
կամ համբերում է: Կառավարութեանը ծա-
նաչելու համար Հոգեւոր միաբանութիւնը
պարտաւոր է իր կանոնադրութիւնը ներկա-
յայցել: Եթէ կառավարութիւնը այդ կանո-
նադրութեան մէջ օրէնքի հակառակ ոչինչ
չի գտնի, այն ժամանակ միաբանութիւնը իրա-
ւունք կը ստանայ Ֆրանսիայում ապրել և
գործել և կառավարութեանը կը ծանաչվի
իրեն իրաւաբանական մի մարմին: Այն ըն-
կերթիւնները, որոնք չեն ներկայացնի ի-
րանց կանոնադրութիւնները կարող են կա-
ռավարութեան կողմից միայն համբերված
լինել: Այդպիսի միաբանութիւններին կառա-
վարութիւնը ամեն ժամանակ կարող է ար-
ձակել, մինչև անգամ հեռացնել Ֆրանսիայից:
Բայց այդ, եզրուածներ ընկերութեան վերա-
բերութեամբ մի առանձին օրէնք կայ, որ
հաստատված է Կարլ X-ի ժամանակ, մին-
չև ոյժ ունի և որի հիման վրա եզրուածնե-
րին կարելի է արտաքսել Ֆրանսիայից:

Այդպիսով այժմեան միւսիստրութիւնը իր
ձեռքին, առանց Ֆերրիի օրէնքի 7-դ յո-
դուածը, բաւական ոյժ ունի իր նպատակ-
ներին հասնելու համար: Կառավարութիւնը
կարող է արգելել Հոգեւոր միաբանութիւննե-
րին ուսումնարանների պահելը, իսկ եթէ ա-
ւելի ուժեղ միջոցներ հարկաւոր լինեն, կա-
րող է այդպիսի միաբանութիւններին անդամնե-
րին Ֆրանսիայից արտաքսել: Կոդիւստներին
կարելի է անմիջապէս պոլիցիական ուժով
հեռացնել:

Հարցը նրանում է, թէ արդէօք Ֆրէյսի-
նէի միւսիստրութիւնը կը թոյլ տայ իրան
այդպիսի չափազանց միջոցներ գործածել, թէ
ոչ: Անհրաժեշտ է, որ Հոգեւոր միաբանութիւն-
ներին, մասնաւոր եզրուածներն ուսումնարան-
ները, գլխաւորապէս միջնակարգերը մեծ հե-
ղինակութիւն ունեն Ֆրանսիական հասարա-
կութեան բաղմամբիւ զատակարգելի առաջ:

Թատրոնից ստացվել է 282 ր.: Ուրեմն ամառնա-
յին թատրոնի մեծութիւնը և նրա երևակայական
յարմարութիւնները ինչ օգուտ բերեցին մասնաժո-
ղովին, բացի 6000 ր. ի դուր տեսել վատնել և
Պալմի գրգռանքներ լցնելը:

Լինել թատրոնը Արծրունուն, Կիրակոսեանին,
կամ Պետրոսեանին,— այդ մի և նոյն է: Մի չի-
նութեան պէտքը ոչինչ կապ չունի նրա տիրոջ
լաւ կամ վատ յատկութիւնների հետ: Եւ կարող
եմ վարձել սենական մի տան մէջ, կարող եմ վար-
ձել խանութներ մի քարվանսարայի մէջ, առանց
ճանաչելու թէ ովքեր են նրանց տէրերը: Այսպէս
էլ մասնաժողովը, եթէ մի փոքր խելք ունենար,
կարող էր օգուտ քաղել Արծրունու թատրոնից,
կեր մասնաւոր առաջարկով էր բոլորովին
ձրկարար:

Մենք թողնում ենք այն միտքը, թէ հայոց
թատրոնական խումբը որքան քաղցր տանջվե-
ցաւ, որքան ճնշվեցաւ, իր ներկայացումների հա-
մար մի սեպական շինութիւն չունենալու պատ-
ճառով:—մենք հեռու ենք պահում մեզ և գովառու-
ներ կարողա՞նք Արծրունի եղբայրներին, որ իրանց
փողով կառուցին մի հայոց թատրոնի շէնք:—մենք
թողնում ենք նաև այն միտքը, թէ հայոց թատրո-
նի գաղափարը պահպանելու համար որքան նպա-
տակարար էր լինէր ներկայացումներ տալ բուն
հայկական թատրոնում:—մենք այդ և զրանց նման
դատողութիւնները մի կողմ ենք դնում, և գործի
վրա նայում ենք միայն շահի և վաճառակա-
նական հաշիւի և րի տեսարանից: Եւ այս
պատճառով հարկաւոր ենք համարում ցոյց տալ,
թէ որքան կորցրեց մասնաժողովը Արծրունու
թատրոնը թողնելով, և որքան մեծ արդիւնք կու-
նենար նա, եթէ իր ներկայացումները այդ թատ-
րոնում կը տար:

Եթէ վաղուց մոռացված օրէնքի հիման վրա,
պոլիցիական ուժով կառավարութիւնը փա-
կէ այդ ուսումնարանները, նա կարող է ան-
բաւականութիւն արտայայնել հասարակու-
թեան այն զատակարգելի մէջ, որոնց օգուտ-
թիւնը այժմ անհրաժեշտ է հանրապետու-
թեան համար: Ուրիշ բան կը լինէր, եթէ
Ֆրանսիական սենատը ընդունէր Ֆերրիի օ-
րէնքի 7-դ յոդուածը: Այս դէպքում հո-
գեւոր միաբանութիւնները ստիպված կը լինէին
փակել իրանց ուսումնարանները նոր հրատա-
րակված օրէնքի հիման վրա: Կառավարու-
թիւնը ստիպված չէր լինի պոլիցիական ոյժ
գործածել, մինչդեռ այժմ այդ անհրաժեշտ
կը լինի:

Անցեալ շաբաթ հեռագիրը հաղորդեց, որ
Ֆրանսիական կառավարութիւնը հրամայել է
եզրուածներին փակել իրանց ուսումնարան-
ները, իսկ Հոգեւոր ընկերութիւններին ներ-
կայացնել կառավարութեանը իրանց գործու-
նէութեան կանոնադրութիւնները:

ԲՈՒՄԵՆԻՍ

«Polit. Corresp.» լրագրին գրում են հետե-
ւեալը Արեւելեան Բուլղարիայի մասին:

Արեւելեան Բուլղարիայի շատ անգամ ըս-
պառնացել է քրիստոնեաների մտադրած
գաղթականութիւնը Ադրիանուպոլի վիլայե-
տից: Ամեն անգամ քրիստոնեաների այդ դի-
տաւորութիւններին արգելքներ են դրված
գրամական պակասութեան պատճառով: Անա-
պահութիւնը և ուժիկ չը ստացող քաղա-
քային աստիճանաւորների հարստահարու-
թիւնները քրիստոնեայ բնակիչներին յուսա-
հատեցնում են: Երկիրը հանգստացնելու հա-
մար Բեուֆ-փաշա իր բոլոր ջանքերը դրծ
է դնում, բայց Բուլղարիայի բոլորովին չե-
զնում: Թիւրք բնակիչները ընտրված ա-
նուանի պատգամաւորներ շատ անգամ
գնացել են Ս. Պոլս և ինդրել են, որ
Բ. Բուլղարիայի Բեուֆ-փաշային
այն պատճառով, որ նա պաշտպանում է քր-
իստոնեաներին, իսկ թիւրքերին հալածում
է: Ութ հարիւր մարդուց բաղկացած ժան-
դարների զորաբաժին կազմվեցաւ, որի հրա-
մանատարութիւնը անգլիացի Բլենդ դղա-
պետին յանձնեցին, բայց այդ ժանդարմները
չորս ամիս շարունակ ուժիկ չը ստանալով,

Որպէս ինքը մասնաժողովը խոստովանում է
վերջին ընդ. ժողովի մէջ, Արծրունին իր թա-
րմը տալիս էր բոլորովին ձրի և այդ ձեւարմ է:
Ուրեմն մասնաժողովը թատրոնի վարձ չը վճա-
րելով, պիտի ունենար մի քանի ծախսեր միայն
լուստրութեան, օրիւնտրի և այլ մանր պէտքե-
րի համար: Եթէ Արծրունու թատրոնը իւրաքան-
չիւր ներկայացումից տալու լինէր 437 ր. մուտք,
որ անտարակուսելի է, և եթէ այդ գումարից 87
ր. որպէս ծախք զեղչէինք օրիւնտրի և լուստր-
ութեան համար,—կը մնար միլիոն թուով դուտ
արդիւնք իւրաքանչիւր ներկայացումից 350 ր., կը
նշանակէ, աւելի շատ, քան թէ տուեց ամառնային
թատրոնը (282 ր.):

Բացի դրանց, մասնաժողովը Արծրունու թա-
րմում մի և նոյն ուժիկներով, մի և նոյն դերա-
սանական խումբով փոխանակ շաբաթ մէկ ներ-
կայացում տալու, կարող էր ամենայն դիւրութեամբ
մի տարվայ ընթացքում աւելի շատ ներկայացում
ներ տալ: Եւ վերև ցոյց տուած հաշիւով, իւրաքան-
չիւր ներկայացումից 350 ր. ստանալով, դուտ
արդիւնք կունենար, շաբաթ մի անգամ ներկայա-
ցումն տալով, 10,500 ր.: Սրա վրա աւելաց-
նելով Պալմին վճարած 6000 ր., ամբողջ ար-
դիւնքը կը լինէր 16,500 ր., միջոցաւ ամառնա-
յին թատրոնում ստացել է 8474 ր.: Բաւական տար-
բերութիւն կայ այդ երկու գումարների մէջ:

Բացի նախնական չափից, պէտք է ի նկատի
առնել և մի ուրիշ յարմարութիւն ևս: Արծրունու
թատրոնը մասնաժողովի կարգադրութեան ներքո
լինելով, նա կարող էր իր ներկայացումները հա-
մար ընտրել շաբաթ մի ամենապարտաւոր օրերը, օ-
րինակ, կիրակի օրը, որ ամառնային թատրոնում
հայերին չեն տայ: Եւ այսպիսով մեր ժողովրդի
թէ միլիոն և թէ արեւմտաւոր դարը, որ կրթու-

փոխանակ հասարակական հանգստութիւնը
և ապահովութիւնը պահպանելու, իրանք
սկսեցին հարստահարել և բռնաբարել բնակիչ-
ներին: Ինչքան կամենում են թող մեղադրեն
բոլորացիներին, բայց չէ կարելի չը խոստո-
վանել, որ այժմ Արեւելեան Բուլղարիայի եւրո-
պական երկրի տեք է ստացել: Ամբողջ նա-
հանգի մէջ կատարեալ ապահովութիւն է
տիրապետում, իսկ վերջին պատերազմից մը-
նացած աւերակները հեռոջ հեռէ անհետա-
նում են: Գաղտնյայն աշխատանքները արդէն
սկսվել են և դրանց պատճառով քրիստոնեա-
ները և մահմետականները մոռացել են ի-
րանց քաղաքական և կրօնական վէճերը: Մա-
սամբ տեղական, մասամբ արտաքին ինտրիգ-
ների շնորհիւ միայն քաղաքներում, մանա-
ւանդ Ֆրիլպոպոլում անհամաձայնութիւն-
ներ են նշմարվում մի կողմից բոլորացիներ-
ի և յոյների, միւս կողմից բոլորացիներին և
թիւրք գաղթականների մէջ: Նահանգական
ժողովի կողմից այդ գաղթականներին տուած
102,000 թիւրքաց լիւրան տարաբաղաբար
բաւական չէ նրանց աղքատութեանց աղա-
սելու և խողաղ աշխատանքով ապրելու մի-
ջոց տալու համար: Պաշտօնատեղիները ամեն
օր լցվում են այդ գաղթականներով, որոնք
գանգաւորում են և վարձատրութիւն են պա-
հանում իրանց կորուստների համար: Այդ
պահանջներին բաւականութիւն տալու հա-
մար մի քանի միլիոններ են հարկաւոր: Տալը
գանգաւորներից հազար մէկն է բաւականու-
թիւն ստանում և այդ հանգամանքը չափա-
զանց բազմաթիւ է Ֆինանսական վարչու-
թեան գործերը: Մի և նոյն ժամանակ պէտք
է ի նկատի ունենալ, որ իւրաքանչիւր չը
բաւականացած գանգաւոր դիմում է կամ
անգլիական հիւպատոսին կամ ուղղակի Բ.
Գրանը և այդ պատճառով անդադար թողնալ-
թիւններ են լինում Ալէքս-փաշայի և Բ.
Գրանի մէջ փոդրի բաժանման մասին: Նո-
րերում Բ. Գրանը վճռողապէս գանգաւորում
էր, որ այդ փոդրից մահմետականները շատ
քիչ են ստացել, մինչդեռ բոլորացիներին
առատութեամբ է տուած: Թիւրքաց կառա-
վարութիւնը այդ մասին անձիշդ տեղեկու-
թիւններ էր ստացել: Ալէքս-փաշան այդ փո-
դրից միայն 20,000 լիւրա բաժանել է բոլո-
րին աղքատ քրիստոնեայ երկրագործներին և
և մի քանի բոլորացիներին, որոնց տները
այրված էին վերջին պատերազմի ժամանակ

և որոնք այդ պատճառով բնակվում էին
թիւրքերի տների մէջ: Սրանց փող տուին
նրա համար, որպէս զի իրանց համար բնա-
կարաններ գտնել և թիւրքերի տները դա-
տարկել: Մինչև այժմ թիւրք գաղթականնե-
րին բաժանված է 70,000 լիւրա: Այդ գու-
մարը չէ բաւականացել, որովհետեւ գաղթա-
կանների թիւը 100,000-ի է հասնում և
նորա չափազանց աղքատ դրութեան մէջ են
գտնվել:

ՄԵԾԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

1,054,05, 22 մարտի (3 ապրիլի): Պարլա-
մենտական ընտրութիւնների մէջ ազատա-
միտները յաղթում են պահպանողականներին:
Կառավարական լուրագիրները միաձայն յայ-
տնում են, որ վերջին պարլամենտի մեծա-
մասնութիւնը գրեթէ բոլորովին քայքայված
է և որ շուտով անհրաժեշտ կը լինի կառա-
վարութեան փոխելը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի: «Русский
Инвалид» հաղորդում է, որ Նրեանի նա-
հանգապետ զինեղաւմայօր Բուլղարիայի տը-
ված է զինեղաւմայօր խոնարհութիւնը և
Ժառայութեանց արձակված է: Գնեղաւմայօր
յօր Շալիով նշանակված է Նրեանի նահան-
գապետ: «Правит. Вѣстн.» լրագրի մէջ ըն-
դարձակ տեղեկութիւններ և օգոյնութեան
են տպված Գարամանի գործի վերաբերու-
թեամբ Ռուսաստանի և Ֆրանսիայի մէջ և-
ղած բանակցութիւնների մասին:

1,054,05, 24 մարտի (5 ապրիլի): Մինչև
էս զիշերը ընտրված են 412 պատգամաւոր-
ներ պարլամենտի համար: Նրանցից 271 ա-
զատամիտ և 141 պահպանողական են: Ա-
զատամիտները պարլամենտի մէջ մեծամաս-
նութիւն ունեն, մինչև անգամ առանց իր-
անդացի ավտոմոբիլիստների:

ԽՈՐԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

սակ հասարակական գործի մէջ խցկվելու միայն
փառքի համար: Ինչ փող, եթէ գործը փչաց-
նում են, եթէ նրանք անընդունակ են, և եթէ
հիմնարկութիւնը վնասվում է նրանց պատճա-
ռով...

Վերջացնելով մեր յօդուածը, չենք կարող մի
քանի խօսք չափել հայոց թատրոնի գոյու-
թիւնը պահպանելու համար սկսելով հաւաք-
ված հիմնական գրամաղլի մասին: Այդ գրամա-
ղլը մեր լսելով, 8000 բուրլի պէտք է լինէր,
բայց մասնաժողովի հաշիւից երևում է, որ նա
ստացել է 5555 ր. միայն, և 1180 ր. մնացել
է գեռ ապուրի: Մեր կարծիքով, բոլոր նուիրա-
տունները իրաւունք ունեն մի կողմէ անգամ չը
յանձնել մասնաժողովին, որովհետեւ այդ փողերը
նուիրված էին Արծրունու թատրոնի անունով, և
ոչ թէ Պալմի գրգռանքներ լցնելու:

Վերջապէս մասնաժողովը իր ստացած 5555 ր.
գրամաղլից ծախսել է թատրոնի զեֆիլոնը
ծածկելու համար 2007 ր.: Ուրեմն, այժմ հիմնա-
կան գրամաղլից մնում է 3548 ր.: Եթէ գործե-
կանը այսպէս կը շարունակվէ, եթէ մասնաժողովը
իր հին սխալներից չի խրատվի, յիշեալ 3548 ր.
այս տարի անպատճառ կը սպաւով, և հայոց
թատրոնի գործը կը սպանվի: Չենք կարծում, որ
այնուհետեւ կը գտնվեն այսպիսի միաբաններ, որ
նորից փող կը նուիրեն թատրոնին, երբ որ այս
տարվայ ամենապաշտօն հանգամանքների մէջ նուիր-
ված փողերը ոչնչացան: Ուրեմն դարձեալ կը լինի
օգէ էն կիկոն... զէ էն կիկոն...—և այժմեան
մասնաժողովի շնորհիւ դարձեալ կը վերականգնվի
հայոց թատրոնի վաղեմի աննախանձելի դրութիւ-
նը...
